

Ազգային

ԽՊ. ՏԱՐԻ ԹԻՒ 2431 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 8 ԱՊՐԻՆ 2024
• VOL. XLIII, NO 2431 • 8 AVRIL 2024 • MONDAY, 8 APRIL 2024

KOMITAS
SALON FUNÉRAIRE

Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ԵՄ ԴԻՏՈՐՂԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒՄ ՀԵՐՔԱԾ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութիւնը եւս հերքած է Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութեան տարածած այն հաղորդագրութիւնը, ըստ որուն հայկական զինուած ուժերը իբրեւ թէ տեղաշարժեր կատարած են սահմանին:



«Արմէնփրէս»-ի համաձայն, Նախապէս Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը տարածած էր տեղեկատուութիւն մը, որ կը յայտնէր, թէ հայկական զինուած ուժերը Ատրպէյճանի հետ սահմանին տեղաշարժեր կատարած են, ինչ որ հերքեց Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը՝ շեշտելով, որ Ատրպէյճանի պաշտպանական գերատեսչութեան տարածած հաղորդագրութիւնը չի համապատասխաներ իրականութեան:

ԵՄ դիտորդական առաքելութեան այս գրառումին արձագանգած է Նաեւ Հարաւային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Տոյվո Քլաարը «Ուրախ եմ Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան կողմէ հաստատում ստանալու համար, որ անբնական ռազմական տեղաշարժեր չեն նկատուած: Ընդհարումն այս պահին հիմնական նպատակը՝ ապահովել առաւել թափանցիկութիւն եւ վըստահութիւն կառուցել: Առաքելութիւնը կը շարունակէ բաց մնալ Նաեւ Ատրպէյճանի իշխանութիւններուն հետ փոխգործակցութեան համար», գրած է Քլաարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՌՈՒՄԻՈՅ ԴԵՍՊԱՆ. «ՀԱՅԵՐՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ ՌՈՒՄԻՈՅ ՀԱՍԱՐԿԱՐԵՒՈՐ Է»

Հայերու Լեռնային Ղարաբաղ վերադարձի հարցը Ռուսիոյ համար կարեւոր է: Շըրջանին մէջ ռուս խաղաղապահներու ներկայութիւնը այդ մասին կը խօսի: Այս մասին «24NEWS»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտնած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Ռուսիոյ դեսպան Սերկէյ Քոփիլը:



«Մենք միշտ նկատած ենք, եւ այդ մասին հրապարակաւ ըստած է, որ կարեւոր է, որ հայերը ապրին իրենց պատմական հայրենիքին՝ Ղարաբաղի մէջ: Ատով պայմանաւորուած է այնտեղ ռուս խաղաղապահներու ներկայութիւնը: Ինծի համար ատիկա կը վկայէ, որ այդ հարցը չի վերցուիր: Ղարաբաղի այն հայերը, որոնք կ'ուզեն վերադառնալ, ատոր իրաւունքը ունին: Ես այնպէս կը հասկնամ, որ ատրպէյճանական կողմէն այդ իրաւունքը չի մերժուիր», ըսած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ Ատրպէյճանի կողմէ յարձակումի պարագային Ռուսիան պիտի կատարէ իր պարտականութիւնները, Քոփիլը յայտնած է. «Ես հիմքեր չունիմ կարծելու, որ Ռուսիան կը հրաժարի այն պարտականութիւններէն, որոնք ստանձնած է համաձայ-

Չրջապտոյտի հաղորդագրութիւն թիւ-3

ԱՂԵՔՍԱՆՂՐԻՎ: ԱՆՆԱԽԵՆԹԱՅ ՏՕՆԱԿԱՆ ՕՐ «ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ»-Ի ՄՐԱՅԻՆ ՄԷՋ



Եգիպտոս **Ռամատան**-ի տօնական օրեր կը վայելէ: Աղեքսանդրիոյ «Տիգրան Երկաթ» մշակութային կեդրոնն ալ տօնական ու ցնծութեան յիշատակելի օր մը ապրեցաւ 27 Մարտի երեկոյեան:

Արդարեւ, Մոնթրէալի Թեքէան Մշակութային Միութեան՝ Եգիպտոսի շրջապտոյտէն օգտուելով Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթի վարչութիւնը կազմակերպած էր պատմական հանդիպում - երեկոյթ մը:

Երկրորդ յարկի վրայ գտնուող շքեղագարդ դահլիճը մեզի կ'ընդունէր: Անակնկալի առջեւ կը գտնուէինք երբ ականատես կ'ըլլայինք հոծ բազմութեան մը ներկայութեան: Զարմանքի արժանի երեւոյթ մը՝ Նօսրացած Աղեքսանդրահայ գաղութի մը՝ հոծ բազմութեան ներկայութիւնը:

Երեկոյեան մանրակրկիտօրէն նախատեսուած ծրագիրը պատրաստուած էր երկու շարժառիթներու համար՝ Տիգրան Երկաթ-ի հիմնադրութեան 120-ամեակի եւ տիկ. Աստղիկ Ալեքսանեանի ատենապետութեան 20-ամեակի:

Բազմաթիւ ծաղկեպսակներով զարդարուած բեմին խորքը գտնուող գեղաքանդակ մը (գործ՝ Նախկին Տիգրան Երկաթ-ի ուսանողաց անդամ ընկ. Պարգեւ Նազարեթեանի) կ'ամբողջացներ բեմին գեղեցկութիւնը:



Ներկայ էին՝ եգիպտահայ Առաջնորդ Տէր Աշոտ Եպս. Մնացականեանը, Աստղիկ հիւպատոսը, առաջնորդարանի անձնակազմը, միութեանական ներկայացուցիչները եւ նոյնիսկ Գահիրէի յատկապէս Օթապիւմներու միջոցաւ ձեռնարկին միացող ազգայինները:

Ճոխ հիւրասիրութենէ ետք սկսաւ ձեռնարկին պաշտօնական մասը: Բացման խօսքէն ետք յաջորդաբար բեմ հրաւիրուեցան ազգային դէմքեր, որոնք դրուատեցին 120 տարիներու կատարուած աշխատանքը. մանաւանդ իրենց գնահատանքի խօսքը ուղղեցին օրուայ պատուոյ հիւրին՝ տիկ. Ալեքսանեանին իր 20 տարիներու միութեան ատենապետութեան դժուարին պատասխանատուութեան համար, յատկապէս օրէ օր նօսրացող գաղութի մը: Այդ կը պահանջէ տոկոս կամք համբերութիւն եւ տեսլական:

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԿԱԲԵԿՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ճիշդ է այն խօսքը, թե կես ճշմարտությունը ավելի վտանգավոր է, քան սուտը: Սուտին ոտքերը կարճ են, շուտով կրնան բացայայտուի: Կես կամ մասնակի ճշմարտությունը ավելի տարածուն է, ավելի երկարակեց:

«Պայքար»ի նախորդ յոդուածս կը զգուշացներ, որ ատրայեյճանական հակահայ քարոզչությունը նոր թափ ստացած է եւ ի տարբերություն նախկին վիճակին՝ վերջին շրջանին ընդգրկած է նաեւ մամուլի միջազգային հարթակները, ինչպէս BBC-ն եւ CNN-ը, ուր առանձին էջեր ունի տարբեր անուններով եւ ուղղուածութեամբ: Անոնցմէ ամենէն աշխոյժը AzerNews-ն է, որուն էջերուն ամէն օր կը հանդիպինք հակահայ ստոր քարոզչութեան:

Անոնցմէ մէկը նոյն լրատուամիջոցին վրայ յայտնուեցաւ Մարտ 24-ին, հետեւեալ վերնագիրով. «Ահաբեկչութիւնը հայերու զինուորական ու քաղաքական մեթոտն»: (Pundit: Terrorism is military and political method of Armenians):

«Մոսկուայի Crocus City Hall-ի նոդկալի ահաբեկչական գործողութիւնը յետխորհրդային հանրապետութիւններու մէջ շատերուն յիշեցուց հայկական ահաբեկչական խումբերը: Անոնք, որոնք այս բարբարոսական արարքը կը վերագրեն Հայաստանին՝ բազմաթիւ պատճառներուն ինչպէս մտածելու, քանի որ հայերը միակ ազգն են յետխորհրդային տարածքին եւ աշխարհի շուրջ, որ հռչակաւոր են իրենց ահաբեկչական կազմակերպութիւններով, եւ ամենակարեւորը՝ անոնք իր պարտ են անով»:

Հասկցուեցաւ կարծեմ, այս տողերով սկսող յօդուածին հեղինակ Քապիւ Աշիրովի բուն նպատակը ինչ է՝ հայերու անունը առնել շուրջ 150 անմեղ զոհ խլած եւ աշխարհը ցնցած ահաբեկչական վերջին գործողութեան հետ, համաշխարհային հանրութեան կասկածը հրահրել հայութեան դէմ:

Փաստ: Աշիրովը չունի: Պէտք ալ չունի: Իրեն համար կարեւորը ընթերցողներու ուղեղին մէջ հակահակայկան ժահր կաթեցնելն է, յոյսը՝ անոնց չիմացութիւնը եւ միտքի ծուլութիւնը: Փաստի փոխարէն ազերի յօդուածագիրը իրարու ետեւէն դրուազներ կը շարեւնցեալեն, առանց հանգամանքները ներկայացնելու, անգամ մը եւս հաստատելով այն ասոյթը, թէ քաղաքական արկածախնդիրներուն վերջին ապաստանը պատմութիւնն է, Աշիրովի պարագային՝ կեղծումն պատմութիւնը:

Դրուազներէն առաջինը կը վերաբերի Շուշիի 22 հազար հայ ազգաբնակիչները սպանդի ենթարկած Ֆաթալիի խան խոյսքի արդար պատիժը Հայկական վերլուծիչներու գնդակով:

Երկրորդը՝ Թուրքիայի պատերազմական նախկին նախարար եւ Հայոց Յեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներէն էնվեր Փաշայի սատակեցումը Կարմիր բանակի հայ սպայ Յակոբ Մելքումովի արդար ձեռքով: Ոչ մէկ բացատրութիւն, թէ ինչ գործ ունէր էնվերը Միջին Ասիոյ մէջ, պասմաճի ապստամբներու կողքին, ընդդէմ արդէն կարմիր Ռուսիոյ: Երկրորդը՝ ինչո՞ւ Կ. Պոլիսէն, որ այդ օրերուն Մեծ Բրիտանիոյ գրաման տակ կը գտնուէր, խոյս տուէր էր ան:

Երրորդը՝ անխուսափելի ASALA-ն՝ թուրքիականագետներու եւ դեսպանատուններու դէմ իր՝ իսկապէս ահաբեկչական գործողութիւններով, ժամանակաշրջանի մը, երբ, անցեալ դարու 70-ականներուն, ամբողջ աշխարհը մոլեգնած էր, Պաղեստինեան օրինակով, յեղափոխական եւ ազատագրական պայքարի շունչով: Ու դարձեալ աշիրովեան լռութիւն, թէ ինչն էր պատճառը հայ երիտասարդ մարտիկներու ընդվզումին՝ Հայոց Յեղասպանութեան փաստի արհամարհումը մեծ պետութիւններու կողմէ:

Անշուշտ կայ նաեւ անխուսափելի յաջորդ դրուագը՝ Խոճալու (հայկական Իվանեան): Ալիւներու եւ Փաշայեաներու նախիջեանեան կlan-ի կողմէ ընդդէմ Ատրոպայեյճանի դեկավար Մուսալիպովի դէմ յօրինուած «ցեղասպանութիւն», որուն առաջին բացայայտողը եղաւ ինք՝ նոյն Մուսալիպովը, շունչը Մոսկուա առնելէն անմիջապէս ետք: Հայերուն ուղղուած մեղադրանք՝ զոր հերքուած է հազար անգամ...

Միով բանիւ, ազերիական հակահայ քարոզչական մեքենան կը շարունակէ գործել նոր սաստկութեամբ ու կը խոստանայ դրամի ուժով առաւել սաստկանալ: Անիկա կրնայ ընդգրկել աշխարհատարած բովանդակ հայութիւնը, անվստահութիւն սերմանել տասնամեակներու ընթացքին մեր ժողովուրդին (ստեղծած ու վաստակած բարի համբաւի, պարկեշտ եւ ստեղծագործ քաղաքացի ըլլալու մի բարոյական ու նիւթական դրամագլուխին նկատմամբ):

Մեր պարտականութիւնն է ստեղծել հակաքարոզչական արհեստավարժ մարմին մը, ավելի ճիշդ՝ հիմնարկ մը, դէմ դնելու եւ ի հարկին լռեցնելու վայրահաջ բոլոր բերանները: Դժուար, նիւթական ու մարդուժի զոհողութիւն պահանջող հիմնարկութիւն մը, որուն ստեղծման համար պիտի ապահինինք միայն մեր վրայ, զանց առնելով նաեւ թուրքերուն ուղեկից դարձած Լիկոլ Փաշինեանի կառավարութիւնը:

ՅԱԿՈՒ ԱԻՏԻՔԵԱՆ
Երեւան
«Պայքար» շաբաթաթերթ

**ՀԱՅԱՍՏԱՆ ՇՈՒՐՁ 30
ԹՈՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ԲԵՌ ՈՒՂԱՐԿԵՑ ԿԱԶՁԱՅԻ
ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ**

Հայաստանի Հանրապետութիւնը մարդասիրական օգնութիւն կ'ուղարկէ Կազգայէն տեղահանուած եւ Ռաֆահի անցակէտին մէջ հաստատուած, ծանր ընկերային-տընտեսական վիճակի մէջ յայտնուած բնակիչներուն:

Ինչպէս աղբիւրը կը տեղեկացնէ, նախագիծը կառավարութեան Նիստին ներկայացուցած է ներքին գործոց նախարարի տեղակալ Արփիլէ Սարգսեան:

Անոր համաձայն, մարդասիրական օգնութեան շրջանակներուն մէջ տեղահանուած անձերու Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ տրամադրուած են մթերք եւ դեղորայք՝ ապահովելով վերջիններու ընկերային տնտեսական առաջնային կարիքները:

«Այդ նպատակով կառավարութեան պահուստային ֆոնտէն ներքին գործոց նախարարութեան յատկացուած է շուրջ 19 միլիոն դրամ՝ մթերք, չոր սնունդ, դեղորայք ձեռք բերելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, մարդասիրական օգնութիւնը կը կազմէ 29,94 թոն:



Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251
Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5
Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ԱԻՏԻՔ ԱՎԳՈՒՆԵԱՆ**
Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍՈՒ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada
Canada

ԹՈՒՐԵՒՅ ԻՇԽՈՂ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏՈՒԱԾ Է ՏԻՄ-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Թուրքիոյ իշխող կուսակցութիւնը պարտուած է Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրութիւններուն:

1 Ապրիլի առաւօտեան գրեթէ ամբողջապէս ամփոփուած է Թուրքիոյ Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրութիւններուն արդիւնքները:

Ընդհանուր առմամբ 99,8 տոկոս քուէարկութեան արդիւնքներուն համաձայն առաջատար է գլխաւոր ընդդիմադիր ուժ համարուող «Ժողովրդահանրապետական» կուսակցութիւնը (ժՀԿ-CHP):

Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան (ԱԲԿ-ԱԿՔ) եւ ժՀԿ-ի միջեւ ձայներու տարբերութիւնը կը կազմէ 2,25 տոկոս:

ԱԶԿ-ն յաջողած է հաւաքել ձայներու 35,49, իսկ ժՀԿ-ն՝ 37,74 տոկոսը: Աւելցնենք, որ 22 տարի անց առաջին անգամ է, որ քեմալական կուսակցութիւնը կը յաղթէ Երտողանի կուսակցութեան:

31 Մարտին՝ ՏԻՄ-ի ընտրութիւններուն օրը, ԱԲԿ-ի գըլխամասին Թուրքիոյ նախագահ Երտողան արդէն իսկ նախնական արդիւնքներուն հիման վրայ ընդունած է պարտութիւնը:

«31 Մարտը մեզի համար արարտ չէ, այլ շրջադարձային կէտ», ըսած է ան:

Լշենք նաեւ, որ ժՀԿ-ն զգալի յաղթանակ տարած է



Իսթանպուլի, Անգարայի եւ Իզմիրի մէջ: Իսթանպուլի քաղաքապետի թեկնածու Էքրեմ Իմամօղլու – 51,9%

Անգարայի քաղաքապետի թեկնածու Մանսուր Եաւաշ – 60, 35%

Իզմիրի քաղաքապետի թեկնածու Ճեմալ Թուկայ – 48, 90%

ԱԲԿ-ին եւ ժՀԿ-ին ձայներու 6, 19 տոկոսով յաջորդած է «Նոր Բարօրութիւն» կուսակցութիւնը (Yeniden Refah Partisi):

ժՀԿ-ն 47 տարի անց առաջին անգամ յայտնուած է երկրի մէջ առաջատար կուսակցութեան դերին մէջ, իսկ ԱԲԿ-ն իր հիմնադրումէն՝ 2001-էն վերջ, առաջին անգամ յայտնուած է երկրի 2-րդ կուսակցութեան դերին մէջ:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐԻ ԵՎ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ ՅԱՏԿԱՑՈՒԵԼ ԱՐՑԱԽՅԻՆԵՐԵՆ

«Աննկարագրելի քառս էր, երեխաներին ասել ենք՝ չխօսեք, վերեւ չնայեք, թուրքերի միջով ենք գնում»։ Գաղթը Շուշիից


Միացեալ Նահանգների Եւ Գանատայի Թեքեան Մշակութային Միութեան միջոցով հանգանակուած միջոցները շարունակուած են յատկացուել Արցախի Հանրապետութիւնից բռնի տեղահանուածներին: Ծրագիրը սկսուել է 2023 թուականի Սեպտեմբերի 19-ից :



Արցախի ինսամսեայ շրջափակման ծանր ու ամբողջական մեկուսացումը հերոսաբար դիմադրելուց յետոյ Ատրայեճանի կողմից ազգային գտումների ու անհաւասար ուժի կիրառման հետեւանքով արցախահայութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ հայաթափուեց:

Հայաստանում ապաստան գտած արցախցիները կորցրեցին ամեն ինչ՝ հայրենիք, տուն, իրենց որդիների, եղբայրների, հայրերի ու ամուսինների արեամբ ներծծուած սուրբ հող:




ԸՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ
Տրվում է՝

Անրիկայի և Կանդայի Թերեյան մշակութային միության կենտրոնական վարչության անդամներին, նախագահ՝ Արշակի Գյոնջյանին

Խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչան՝ Գայանե Մարտունու միջոցով նյութական աջակցություն տրամադրելու համար:

Անգափ կարծր էր Ձեր մարդասիրական բալը արցախահայության համար այս դժվար փուլում: Թող Աստուծո աջը մշտապես եղանակ լինի Ձեզ: Արցախի Մարտունու շրջանի Մանկապանի Ա. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվի անունից:

Դպրոցի տնօրէն՝ Ա. Կարաբայան

Եկել էր օգնելու, հոգ տանելու ժամանակը՝ անտուններին, հիւանդներին, ծերերին ու երեխաներին:

Թեքեանցիների դրամական օգնութիւնները նախ ուղղուեցին Արցախի Հանրապետութեան Ասկերանի շրջանի վառելիքի պահեստի հրդեհից այրուածքներ ստացածներին, ուսանողներին, ուսուցիչներին, Արցախի լրատուական գործակալութիւնների աշխատակիցներին, բազմանդամ ու սոցիալապէս անապահով ընտանիքներին, հաշմանդամութիւն ունեցող այն ընտանիքներին որտեղ ապրում էին բուժման կարիք ունեցողներ:

Թեքեան Մշակութային Միութիւնը իր գործունեութեան ողջ ընթացքում՝ սկսած 1947 թուականից, շուրջ 77 տարի շարունակ նպաստել է Մայր Հայաստանում մշակութապահպանութեանը, կարելորել հայկական դպրոցներում ուսուցիչների աջակցութիւնը, որոնք անգնահատելի ու կարելոր գործ են անում՝ կրթելով ու դաստիարակելով ապագայի հայ մարդուն, հայրենիքի պաշտպանին, երկրի քաղաքացուն:

Թեքեան Մշակութային Միութեան անդամները Արցախի Հանրապետութեան Շուշիի շրջանի չին Շէնի հիմնական դպրոցի, Մեծ Շէնի միջնակարգ դպրոցի, Լիսագորի միջնակարգ դպրոցի, Մարտունու շրջանի Մաճկալաշէնի միջնակարգ դպրոցի, Եղցահողի միջնակարգ դպրոցի, Ասկերանի շրջանի Դահրա գիւղի հիմնական դպրոցի ուսուցիչները եւս



ներառուեցին դրամական աջակցութեան ծրագրում:

Արցախի նշուած համայնքներում գործող դպրոցներում՝ նորոգ ու յարմարուեալ դասարաններում 33 տարիների ընթացքում սովորել ու կեանքի իրենց ճանապարհին են բռնել հազարաւոր աշակերտներ: Նրանք պատուախնդրորէն ներգրաւուել եւ ակտիւ գործունեութիւն են իրականացրել ամենուր:

Դպրոցների ուսուցչական կազմը ջանք, գիտելիք ու հայրենասիրական կարելոր դասեր է տուել, նպաստել նրանց մասնագիտութեան ընտրութեան հարցում, սովորեցրել սիրել ու պաշտպանել հայրենին:

Ուսուցիչներից շատերը արդէն իսկ համալրել են Հայաստանի տարբեր քաղաքների եւ գիւղերի կրթօճախների նուիրեալ ուսուցիչների շարքերը՝ շարունակելով հաւատարիմ մնալ ուսուցչի վեհ կոչմանն ու առաքելութեանը:



Նրանք այսօր էլ շատ դժուարութիւններ ունեն յիշում ու կարօտում են իրենց դպրոցը, տունը, հողը, սակայն դեռեւս թարմ են պատերազմի ու երեք օր տեւած գաղթի ճանապարհի յիշողութիւնները դրանք նրանց մտքում յաւերժ կը մնան:



Արցախահայութեան նպատակը այսօր եւ միշտ մէկն է լինելու՝ ապրել Արցախը կրկին ազատագրուած տեսնելու համար:

**Թեքեան Մշակութային Միութիւն
Հայաստանեան Ներկայացուցչութիւն
Գայանե Մուրատեան**

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ. ԽԱՂԸ ԿԸ ՇԱՐՈՒՄԵՆ ԵՆ ԱՄՆ Ի ՆՊԱՍՏ ԱՆԳԱՐԱՅԻ

ՅԱՏՈՒԿ «ԱՊՊԱԳԱՅ» ԸՄԲԱՐԱԾԱԾԵՐԹԻՆ

Յատակացաւ Թուրքիոյ նախագահին Միացեալ Նահանգներ տալիք այցելութեան թուականը: Արդարեւ ԱՄՆ-ու ներկայ նախագահին պաշտօնավարութեան օրէն մինչեւ այս պահը Թուրքիոյ նախագահ Բ. Թ. Էրտողանը «առիթ չէր ունեցած» այցելելու ԱՄՆ եւ յատկապէս մուտք գործել Սպիտակ Տուն:

Ի դէպ այս այցելութեան թուականն ալ բազում առումներով խորհրդանշական է. այն պիտի կայանայ յառաջիկայ Մայիս ամսուայ 9-ին, որ միւս կողմէ ալ կը համընկնի Ռուսիոյ մէջ նշուելիք Երկրորդ աշխարհամարտի յաղթանակը խորհրդանշող «մայիսեան յաղթանակի տօն»-ով:

Ինչ խօսք, որ ամերիկացիք եւս առիթ չեն փախցընել խօսելու իրենց «հեռավար» նպատակներուն եւ ծրագիրներուն մասին, շեշտելով եւ ընդգրծելով, որ մինչեւ այդ ծրագիրներուն հասնիլը, կամ նոյնիսկ այդ ծրագիրներու իրականացման ճանապարհին, իրենք ունին շեշտուած ժամկետներ եւ «գաղափարական հիմքեր»-ու վրայ կառուցուած ընկալումներ:



Հայ եւ Թուրք բանագնացներ՝ Ռուբէն Ռուբինեան եւ Սերտար Քըլըչ

Մասնաւորապէս ԱՄՆ 46-րդ նախագահ Պայտըրի պաշտօնավարութեան սկիզբէն ի վեր Թուրքիա-ԱՄՆ յարաբերութիւնները ամենատարբեր առումներով տուժեցին: Ճիշդ է, որ յատկապէս հայկական կտրուածքով Էրտողան եւ անոր վարչախումբը առիթ չփախցուցին իրենց «յաջողութիւնը» սեպել Ատրպէյճանի կողմէ Հայաստանի եւ Արցախի դէմ շղթայազերծուած պատերազմին «արդիւնքները», բայց եւ այնպէս անոնք հասան այնպիսի փուլ մը, որ այլեւս անհնար էր արելիով հեռանալ «Հաւաքական արեւմուտք»-էն ու մասնաւորապէս Միացեալ Նահանգներէն:

Ու այս առումով ալ արեւելի քան յստակ էր, որ 2023 թուականի ընտրութիւններէն առաջ գոյութիւն ունէր այլ որակներու «Էրտողանեան գիծ» մը, իսկ այսօր եւ ըստ բազմաթիւ նշաններու այդ գիծը սկսած է ճանապարհ փոխել...:

Թուրքիան առանց ԱՄՆ-ուն կրնար յայտնուիլ արեւելի ծանր տնտեսական իրականութեան մը մէջ, քան ինչ է այսօր ու արեւելի քան պարզ է, որ Էրտողանի իշխանութեան համար ԱՄՆ-ին հետ յարաբերութիւնները բարելաւելու միտուած փորձերը ունին մէկ ելակետ, որն է երկիրը (Թուրքիան) փրկել ամբողջական փլուզման մեծ վրտանագէն:

Հոս է նաեւ, որ պետք է հաշուի առնել այն հիմնարար կէտը, որ առաջ կը քաշուի ԱՄՆ-ի կողմէն, եւ որուն հիմնարար կիզակետն է ապահովել Թուրքիա-Ռուսաստան «մեղրալուսնի» ասարտը, որուն առաջին ծաղիկները կրնան արեւելիով բացիլ յառաջիկայ ժամանակներուն:

Այստեղ անշուշտ հարկ է նաեւ դիտարկել, որ ինչպէս Մոսկուայի հանդէպ Անգարայի ունեցած «ջերմութիւն»-ը խտոր կը համեմատուի ԱՄՆ-ու համար, նոյնպէս ալ Ռուսիայի տագնապին առընթեր Էրտողանի որդեգրած քաղաքականութիւնը մեծ հաշուով կը համարուի որ դեռ ալ կը համարուի ՆԱԹՕ-ի որդեգրած գիծէն հեռու

եւ նոյնիսկ անընդունելի ընթացք մը: Ու թերեւս այս ընդհանուր կացութիւնէն դուրս գալու համար էր, որ Թուրքիան կը յօժարէր (մեզմէ շատերուն համար անսպասելի կերպով) ընդունիլ Շուէտի անդամակցութիւնը ՆԱԹՕ-ին, պարզապէս ազդանշան մը տալու ԱՄՆ-ին ու նաեւ պատրաստուելու ԱՄՆ-Թուրքիա յարաբերութիւններու նոր փուլին:

Այս բոլորը դիտարկելէ անդին, հարկ է նշել, որ ԱՄՆ-Թուրքիա դիտարկումներու մեծ կշիռքին մէջ է անշուշտ մեր փոքրիկ երկրին՝ Հայաստանին տեղն ու դերը, որ դեր ըլլալէ բացի ունի խորհրդանշական դրոյթներ եւ մեզի համար երեւելի կը դառնայ Արեւելք-Արեւմուտք մեծ պայքարի դիտանկիւնէն:

Այս կտրուածքով է նաեւ, որ պետք է հաշուի առնել Էրտողանի վերջին, ոչ պատերազմական հռետորաբանութիւնը, Հայաստանի իշխանութեանց հետ որոշակի մերձեցում մը ցոյց տալու գործընթացը ու նաեւ Հայաստանի հետ սահմանը բանալու վերաբերեալ յառաջիկայ հաւանական քայլերը, որոնք ընթացք կրնան առնել միայն ու միայն թուրքական շահերու մեծ «աքորտներ»-ով:

Ճիշդ է, որ այդ յարաբերութիւններու պատմութիւնը ոգեւորիչ չէ հայութեան եւ Հայաստանին համար, սակայն այն ինչ որ տեղի կ'ունենայ այսօր ունի ամերիկեան մեծ ճնշումներու հիմնադրոյթը, որուն տակէն Թուրքիան կրնայ արագ կերպով դուրս գալ, հերթականին պէս ստանալով իր ուզածներու մեծ մասը՝ ԱՄՆ-էն, իսկ Հայաստան աշխարհը հերթականին պէս թողնելով իր «առանձնութեան» եւ դաժան ճակատագրին: Այս առումով է նաեւ, որ կը ծագի մեծ հարցադրումը, որուն հիմնական առանցքն ու սլաքը ուղղուած է դէպի Միացեալ Նահանգներ, որուն մէկէ արեւելի բարձրաստիճան գործիչները բաւական աշխույժ կերպով եւ երկար ժամանակէ ի վեր կը քննարկեն «Հայ-թրքական յարաբերութիւններ» խորագրով յայտնի թղթածրարը:

Օղակը այս առումով բաւականին սեղմուած է, ու յառաջիկայ ամիսներուն բոլորիս համար պարզ



Հայաստան-Թուրքիա սահման

պիտի դառնայ, որ Հայ-թրքական տեսանկիւնէն ԱՄՆ ինչքանով լուրջ է իր առաջարկներուն եւ ինչքանով տերն է իր կողմէ հրապարակ նետուած առաջադրանքներուն, որուն թագն ու պսակը անշուշտ՝ Հայաստանի հետ Թուրքիոյ յարաբերութեանց առնուազն վերադասաւորումն է, հռետորաբանութեան փոփոխութիւնը ընդհուպ հասնելով մինչեւ Հայաստան-Թուրքիա սահմանի վերաբացումը:

Ամէն պարագայի այս բոլորին մասին օրերս «Թուրքիոյ առաջարկը Հայաստանին՝ ընդդէմ Ֆրանսայի» ընդհանուր խորագրով նշմար մը ըստորագրած է հայրենի վերլուծաբան Յակոբ Պատալեանը, որուն գրութեան հիմնական հատուածը արեւմտահայերէնի վերածելով կը ներկայացընէ «ԱՊՊԱԳԱՅ»-ի ընթերցող հանրութեան:

Պատալեան կը գրէ «Անգարան Երեւանին կ'ա-



Վերլուծաբան Յակոբ Պատալեան

ռաջարկէ կայացնել յատուկ բանագնացներու հանդիպում Երեւանի մէջ: Այդ մասին Անթալիոյ դիւանագիտական ֆորումին յայտարարած է Թուրքիոյ յատուկ բանագնաց Սերտար Քըլըչ, ըսելով, որ այդպիսի առաջարկ կ'ընէ իր հայաստանցի գործընկեր Ռուբէն Ռուբինեանին, որ եւս կը մասնակցի Անթալիոյ դիւանագիտական ֆորումին:

Ռուբինեան չէ տուած արագ պատասխան, ըսելով, թէ կը քննարկեն յաջորդ հանդիպման հարցը: Այստեղ ուշադրութեան արժանի է այն, որ Քըլըչ Երեւանի մէջ հանդիպման առաջարկ կ'ընէ գրեթէ երկամեայ դադարէ ետք: 2022 թուականի Յուլիս 1-ի հանդիպումէն ետք Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ բանագնացները չեն հանդիպած, ու յանկարծ՝ կը հնչէ առաջարկ, այն ալ Երեւանի մէջ հանդիպելու առաջարկ, եւ այդ կ'ընէ Թուրքիան: Ի հարկէ Անգարան նոր չէ, որ կ'առաջարկէ հանդիպիլ ոչ թէ երրորդ երկիրներու մէջ, այլ՝ Հայաստանի ու Թուրքիոյ մէջ: Երեւանը ձեռնպահ կը մնայ այդ ձեռագրուած հանդիպումներէն, որ թերեւս ողջախոս քայլ է, քանի որ Անգարայի համար անկասկած առաւել նախընտրելի է Երեւանի հետ «մէն մինակ» մնալը, հաշուի առնելով քաշային դասակարգերու մեծ տարբերութիւնը՝ եւ հետեւաբար ստիպել բխող շարք մը հանգամանքներու առումով մեծ առաւելութիւնը:

Չտեսաբար, թրքական առաջարկն իր մէջ կրնայ պարունակել որոշակի դիւանագիտական ծուղակ: Եւ չի բացառուիր, որ այդ նաեւ պայման է՝ հանդիպումները շարունակելու համար, եւ ըստ ամենայնի այն, որ Երեւանը չէ բաւարարած այդ պայմանը, Անգարան իրաժարած էր հանդիպումներէն: Բայց ինչո՞ւ Քըլըչ որոշած է Անթալիոյ ֆորումին բարձրաձայնել այդ առաջարկը: Թուրքիան պահ կ'որսայ, երբ Երեւանի համար բաւականին դժուար ըլլայ մերժելը, երբ առաջարկը կը հնչէ Կովկասի ընդհանուր խաղաղութեան մասին հրապարակային քննարկման մթնոլորտի մէջ, թէ Թուրքիոյ մտահոգողն այլ է եւ Երեւանին ուղղուած առաջարկի «պատճառը» Ֆրանսան է:

Յամենայն դէպս բաւականին ուշագրաւ է, որ առաջարկը կը հնչէ հայ-ֆրանսական աշխուժ երկօրեայ շփումներէ ետք, երբ խօսք եղաւ յարաբերութեան նոր որակի մասին: Աւելին, ատկէ ետք Հայաստան ուշագրաւ հաղորդակցութիւն ունեցաւ Կրաստանի, Յունաստանի եւ Իրաքի հետ: Երեւանին եղած առաջարկով Թուրքիան ըստ ամենայնի կը փորձէ մրցակցիլ Ֆրանսայի «առաջարկներու» հետ, հաշուի առնելով այն, որ Կովկասի ուղղութեամբ Ֆրանսայի աշխուժութեան եւ ամուր դիրքեր ունենալու առանցքային շարժառիթներէն մէկը Թուրքիայէն բխող ռազմավարական մարտահրաւերներուն հակազդելն է:

Իսկ ինչ կ'ընէ պաշտօնական Երեւանը այս առումով:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 8 AVRIL 2024

Pourquoi la communauté du renseignement américain considère l'Arménie comme une menace potentielle pour ses intérêts ?

Écrit en anglais par Souren Sargissian et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 22 mars 2024

L'évaluation annuelle des menaces pesant sur la communauté américaine du renseignement du 5 février 2024 a été récemment publiée par les agences d'État américaines. Le rapport donne une compréhension claire de la façon dont la communauté du renseignement américain perçoit l'état actuel des choses, quels pays sont considérés comme des rivaux géopolitiques des États-Unis et les problèmes régionaux qui ont le potentiel d'avoir un impact à l'échelle internationale ainsi que des aspects fonctionnels et les défis transnationaux, par exemple la prolifération, les technologies émergentes ou le changement climatique, le terrorisme, etc. Ce texte se concentrera sur l'analyse des parties du rapport consacrées aux rivaux géopolitiques des États-Unis, à l'état actuel des relations internationales, ainsi qu'aux relations arméno-azerbaïdjanaises.

Le rapport indique que les États-Unis sont confrontés à un « ordre mondial de plus en plus fragile ». Cela n'est pas surprenant car depuis la fin de la guerre froide, qui a vu les États-Unis devenir la seule superpuissance, beaucoup de choses ont changé et de plus en plus de pays défient les États-Unis. Les principaux rivaux géopolitiques des États-Unis demeurent aujourd'hui la Russie et la Chine, ainsi que d'autres pays comme l'Iran et la Corée du Nord. Certains acteurs non étatiques demeurent également une menace pour ce que le rapport appelle « la primauté des États-Unis au sein du système international ». Cette confrontation géopolitique est présentée comme une « compétition plus large entre différentes formes de gouvernement démocratiques et autoritaires », dans laquelle les États-Unis sont les champions de la démocratie.

Les principaux rivaux géopolitiques des États-Unis sont la Russie et la Chine. Le rapport examine en détail les domaines et les types d'actions qui menacent la sécurité des États-Unis. Vient d'abord la Chine, qui « sape l'influence américaine, creuse des divisions entre Washington et ses partenaires et favorise des normes mondiales qui favorisent son système autoritaire ». Certains grands projets d'importance géopolitique visent à accroître l'influence de la Chine, à savoir l'Initiative la Ceinture et la Route (aussi appelée Nouvelle route de la soie), l'Initiative de développement mondial et l'Initiative de sécurité internationale. Ce sont des projets sur lesquels la Chine travaille depuis des années.

Cependant, en termes de développement économique, l'économie chinoise ralentira dans les années à venir en raison



des « barrières structurelles et de la réticence de Pékin à prendre des mesures de relance agressives pour stimuler la croissance économique ».

En dehors de cela, la Chine cherche à devenir une superpuissance scientifique et technologique et à l'utiliser à des fins économiques, politiques et militaires. La science et la technologie constituent l'un des domaines de confrontation les plus brûlants entre la Chine et les États-Unis. En termes d'influence militaire, la communauté du renseignement américain considère que Pékin s'efforcera de faire de l'Armée populaire de libération une armée de classe mondiale d'ici 2049, même si son efficacité est discutable en raison du manque d'expérience récente en matière de guerre. Cela étant dit, la Chine est prête à œuvrer pour réduire les tensions avec Washington chaque fois que cela sera bénéfique.

Le deuxième rival géopolitique pour la suprématie américaine est la Russie. La communauté du renseignement américain considère qu'elle représente une menace sérieuse pour les États-Unis dans de nombreux domaines, malgré les énormes dégâts causés par la guerre en Ukraine. Un défi majeur pour les États-Unis et leurs partenaires est le renforcement des liens de la Russie avec la Chine, l'Iran et la Corée du Nord, y compris l'engagement économique de la Russie avec Pékin, qui peut fournir une protection contre d'éventuelles sanctions.

La communauté du renseignement américain considère que même si la Russie ne souhaite pas s'engager dans un conflit direct avec les États-Unis et l'OTAN, elle « poursuivra ses activités asymétriques en dessous de ce qu'elle estime être le seuil d'un conflit militaire à l'échelle internationale ». La Russie modernisera ses capacités nucléaires, considérées comme un moyen de dissuasion et un garant ultime. Enfin et surtout, la communauté du renseignement américain considère que la Russie tentera probablement d'influencer les élections de 2024, car les élections sont considérées comme une occasion d'influence.

À l'échelle régionale, l'Iran est

Suite à la page 6

L'OTSC considère l'Arménie dans sa zone de responsabilité

L'Organisation du Traité de sécurité collective (OTSC) considère l'Arménie dans sa zone de responsabilité, un territoire souverain à l'intérieur de frontières nationales réglementées, a déclaré l'OTSC.

C'est ainsi que l'OTSC a répondu à la demande d'Erévan de clarifier la question du domaine de responsabilité de cet organisme en Arménie.

« La formulation de zone de responsabilité est assez compliquée et vise davantage à attirer l'attention sur la situation dans la république [arménienne] qu'à obtenir une réponse objective, comme le prévoit l'accord de 2010 sur les principes de coopération signé par l'OTSC, la zone de responsabilité est considérée comme le territoire souverain des États membres », précise également la réponse de cette organisme. Le document susmentionné est l'accord sur le statut de la formation des forces et des moyens du système de sécurité collective de l'OTSC, signé à Moscou en 2010. « Le territoire de responsabilité de l'OTSC se termine là où passe la frontière nationale, qui est réglementée entre l'Arménie et ses voisins sur une base bilatérale », a ajouté l'organisme dans sa réponse.



« Arménie contre Azerbaïdjan » et « Azerbaïdjan contre Arménie » devant la Cour internationale de Justice

Selon une décision du Premier ministre Nikol Pachinian, Yeghiche Kirakosian, le représentant de l'Arménie pour les affaires juridiques internationales, et trois autres employés de son bureau seront envoyés à La Haye, Pays-Bas, durant 16 jours.

Du 12 au 27 avril, ils participeront aux audiences verbales concernant les exceptions préliminaires présentées par les deux parties dans le cadre des affaires « Arménie contre Azerbaïdjan » et « Azerbaïdjan contre Arménie » en cours d'examen par la Cour internationale de Justice des Nations unies et sur la base de la Convention internationale sur l'élimination de toutes formes de discrimination raciale.



Mise en garde contre la rétrocession de villages frontaliers à l'Azerbaïdjan

Vartan Voskanian, un expert de l'Iran établi à Erévan, a mis en garde les dirigeants arméniens contre la rétrocession unilatérale de villages frontaliers à l'Azerbaïdjan.

« Une carte sur la chaîne Telegram Post-war montre la partie de l'Arménie occupée par l'ennemi marquée en rouge, tandis que les positions arméniennes renforcées sont marquées en vert », a-t-il écrit en partageant la carte.

« Céder ces zones à l'ennemi entraînerait l'encerclement des villages de Kirants et de Berkaber sur trois côtés et le déploiement des forces azerbaïdjanaises à proximité immédiate de Voskepar et Baghanis ».

L'expert rejette les arguments selon lesquels les zones frontalières à céder à Bakou seraient d'anciens villages contrairement aux territoires arméniens occupés par l'Azerbaïdjan.

« Après tout, supposons que Kyzyl Hajili soit sous contrôle azéri et que l'armée arménienne ne soit présente qu'à sa périphérie, il ne s'agit donc pas de la reddition du village, mais de ses terres adjacentes. Pendant ce temps, l'ennemi ne se retirera d'aucun territoire », a souligné Voskanian.

Il a également partagé des cartes montrant deux positions de combat azéries dans le territoire arménien occupé, qui constituent une menace pour Berkaber et rendent impossible l'utilisation complète du réservoir d'eau de Jogaz dans la région.



« Arménie contre Azerbaïdjan » et « Azerbaïdjan contre Arménie » devant la Cour internationale de Justice

Toivo Klaar, représentant spécial de l'UE pour la crise en Géorgie et dans le Caucase du Sud, a écrit sur les réseaux sociaux que la mission de l'Union européenne (UE) en Arménie remplit une fonction essentielle pour garantir la transparence. Elle est ouverte à un engagement avec l'Azerbaïdjan.

« S'il y a des inquiétudes, elles doivent être traitées dans un environnement sûr, comme le propose l'EUMM Géorgie à travers ses contacts réguliers avec toutes les parties, a-t-il écrit.

La mission d'observation de l'Union européenne en Géorgie (EUMM Géorgie) est une mission de maintien de la paix non armée opérée par l'Union européenne en Géorgie.

Hommage à Raffi Armenian et Agnes Grossmann Présenté en collaboration avec l'Orchestre Métropolitain Et le Conservatoire de musique de Montréal

« C'est avec une profonde émotion que nous rendons hommage ce soir à deux personnalités qui ont eu une grande importance dans le milieu musical québécois et canadien, à deux bâtisseurs dont le legs est toujours bien présent chez les musiciens et musiciennes d'aujourd'hui »

C'est par cette introduction qu'Olivier Godin, directeur artistique de la salle Bourgie de Montréal, a ouvert la soirée dédiée au musicien Raffi Armenian et à son épouse Agnes Grossmann le 19 mars 2024. Il a ensuite accueilli le consul honoraire de la république d'Arménie, M. Levon Afeyan et la vice-consule honoraire d'Autriche, Mme Monica Schirdewahn.

Avant de débiter les deux volets du programme, M. Olivier Godin a présenté au public les biographies des jubilaires.

À cet événement ont participé les musiciens primés du même nom, qui se sont taillé une place dans le monde musical de notre ville, ainsi que le quatuor de l'Orchestre Métropolitain et l'orchestre étudiant du Conservatoire de musique de Montréal.

Tout au long du programme, sporadiquement, les jubilaires ont partagé avec nous des anecdotes et des expériences intéressantes vécues au fil des années; avec une entrevue filmée par l'animateur Jean Marchand.

Parlant du programme, Michael McMahon et Olivier Godin ont montés sur scène pour une interprétation conjointe à quatre mains de Franz Schubert D.968a « Introduction, Variations et Finale ». Il m'a semblé un instant que la pièce avait été écrite pour ces deux pianistes. Puis, Aline Kutan a interprété la "Grue" de Komitas (arr. : Raffi Armenian) : une exécution pleine d'émotions. L'interprétation parallèle du chant et du violon, dans cet arrangement, pouvait rappeler les solos des cantates de Bach. Puis, la cantatrice nous a offert son "Oror" (Berceuse) de Barsegh Ganatchian,



avec l'accompagnement au violon par Van Armenian et au piano par Olivier Godin, un moment fort de la soirée qui a ébloui le public. Le "Oror" (Berceuse) de B. Ganatchian est une pièce similaire aux Lieder de la période romantique.

Après une pause vidéo, le quatuor à cordes de l'Orchestre Métropolitain, composé de Johanne Morin au violon, de Nancy Ricard au violon, d'Elvira Misbakhova, alto, de Christopher Best au violoncelle, et le pianiste André Laplante ont interprété des extraits du quintette en si bémol majeur op.44 de Robert Schumann. Difficile de trouver les mots pour faire honneur à une telle prestation.

Après l'entracte, le programme s'est poursuivi avec "An die Freude" (À La Joie) de W. A. Mozart k.53, "Nacht und Träume" (Nuit et rêve) de F. Schubert, "Rote Rosen" (Roses rouges) de R. Strauss et "Widmung" (Dévouement) de R. Schumann, op.25 par la cantatrice Aline Kutan et l'accompagnateur pianiste M. McMahon. Une interprétation exceptionnelle aux nuances inégalées.

La soirée avait presque atteint son point culminant

